


Ն Ե Մ Ե Ս Ի Ո Ս

ԵՒ ՆՈՐԱ ՑԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑ ԳՐՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Զ Ե Կ Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն



ԻՆ ժամանակաց համահարեղ մտաւորական երկունքն 'ի լոյս հանել մոռացութեան խաւարէն՝ իրեն նպատակ դրած է կարծես ներկայ դարս, լաւ համոզուած լինելով՝ որ մատենագրութիւնք, արուեստք եւ գիտութիւնք պէտք է իրենց հաստատուն հիմն ունենան անցեալ ժամանակաց փորձառութիւնն։ Այս նախնեաց գործոց հրատարակութեան երկրորդ նպատակ մ'ալ է՝ ծանօթացընել ներկայից թէ՛ որչափ պարտական ենք մեր նախնեաց անխոնջ եւ ուսումնասէր բարուց, եւ թէ՛ որչափ երախտագէտ պէտք է լինինք նոցա աշխատալի հետազոտութեանց, համբերատար խուզարկութեանց, հանահարեղ դրութեանց եւ բարեբախտ գիւտից հաւար։ Այո, հետագայ դարք պէտք է որ 'նոխսանան, զարգանան եւ յառաջ դիմեն, բայց պէտք չէ մոռնան՝ որ այս իրենց զարգացումն հիմն ունի նախնեաց արդիւնքը, եւ թէ՛ այդ յառաջադիմութիւնն ժառանգութիւն մ'է, զոր թողել է նոցա նախնեաց հանահարն։ — Այս եղել է անշուշտ մեզմէ յառաջ, եւ ներկայիս մէջ ալ այս նպատակն է անտարակոյս, զոր դրել են իրենց առաջ բազմաթիւ իմաստունք եւ հետաքնին բանասէրք, երբ նախնեաց ձեռագրաց հետազոտութեամբք՝ ամրափակ դարաններէ եւ 'ի հազարաւոր ամաց ծանր քննութենէն ազատելով զայնս կամ տպագրութեամբ բնագրաց եւ կամ թարգմանութեամբք՝ հասարակաց ծանօթութեան եւ օգտի առարկայ կ'ընծայեն զայնս։ Այս է ահաւասիկ եւ մեր ներկայ հրատարակութեանս ժամանակ առաջնեղեալ նպատակն, այսինքն է, *Բաղդասր քնոչքեան մարդոյ* ազգայնոց ծանօթացընելով, յորդորել զնոսա առաւելագոյն եւս յարգելու մեր նախնիքը եւ նոցա գրաւոր լեզուն։ Փիւնիկեցի Խմեսացոց հովուին՝ Նիմեսիոսի անունն՝ միայն առ սակաւս 'ի բանասիրաց կարծեմ թէ ծանօթ լինի. շատ պատմագիրք եւ իմաստասէրք եւ ոչ իսկ կը յիշեն զնա իրենց գրութեանց մէջ, եւ սակայն իւր *Բաղդասր քնոչքեան մարդոյ* գրութեամբ՝ կ'արժանացընէ զինքն նախնի դարուց եւ գիտութեան մէջ հռչակաւոր եղած անուանց դասակարգին պատկանելու. վասն զի կը տեսնենք յայսմ երկասիրութեան՝ ընտիր յոյժ բարոյական մը, եռանդուն հաւատք, վսեմախոհ միտք, հաստահիմն պատմաբան,

բանտումիւն, ընդարձակածաւալ գիտութիւն. եւ ոչ միայն ամենամեծ կարեւորութիւն ունի գրուածս՝ նկատելով զայն քրիստոնէական կրօնից եւ իմաստասիրական վարդապետութեանց տեսակիտէն, այլ եւ նկատմամբ մարդկային ռոգեբանական եւ նիւթական կազմուածոյն, Նեոէսիոսի նպատակն լինելով՝ ոչ միայն ուսումնասիրել զմարդ իբրեւ բանական եւ բարոյական էակ, այլ եւ արարածոց դասակարգին պատկանող իբրեւ կենդանի եւ զգայուն գոյութիւն, հպատակ զինքը շրջապատող իրաց նման՝ բնութեան ընդհանուր եւ մասնական օրինաց, Յիւրաւի, ոչ սակաւ զարմանք կ'ազդէ մեզ լսել այս գրուածիս մէջ՝ մեզմէ գրեթէ վեշտասան դար առաջ ապրող իմաստասիրի մը լուսամիտ վարդապետութիւնքն եւ դիտողութիւնք՝ մարդկային զգայարանաց վրայ, երակաց կանոնաւոր ամփոփուելուն եւ ընդլայնելուն վրայ, որոց պատճառ զսիրտն կ'աւանդէ, շնչառութեան վրայ՝ զոր այրման հետ կը բաղդատէ, եւ այլն. ինչպէս պիտի տեսնէ ուսումնասէր ընթերցողն՝ գրուածիս ընթացքին մէջ:

Գրուեց պատշաճ էր աստ աւանդել մեզ համառօտիւ Նեմեսիոսի վարուց վրայ ունեցած տեղեկութիւննիս, որք եւ յոյժ սակաւաթիւ ՚են, եւ կամ հառել նորա պատուանեան իմաստասիրական դրութեան վրայ. քսոյց մեք աւելորդ կրկնաբանութենէ խորշելով՝ ընտրելագոյն կը համարինք՝ ուղարկել մեր ընթերցողները այս նիւթիս վրայ գրուած հետաքննական յօդուածի մը ՚ի Հ. Արսենէ Սուքրի, Հանդիսիս ԼԸ հատորոյն մէջ (1880, էջ 326-340), ուր կը խօսուի նաեւ գործոյս հայ թարգմանչին՝ Ստեփանոսի Սիւնեցու եւ նորա յունաբան ոճոյն վրայ:

Նեմեսիոսի գործոյն յոյն բնագիրն զանազան անգամ տպագրուած է, նախ յԱնվերսա՝ յամիւն 1566, 'ի Փարիզ՝ յամիւն 1644, յՍքսֆորտ՝ յամիւն 1671, 'ի Վենետիկ՝ յամիւն 1788, այլ քան զնախընթացսն ընտրելագոյն է 1802ի տպագրութիւնն՝ որ 'ի Հալլ Գերմանիոյ տեղի ունեցաւ, 'ի Քրիստիան Փրեդերիկ Մատեէէ, որոյ հետ քաղաւտելով եւ մեք մեր ձեռագիրը (ինչպէս եւ այլ քանի մի օրինակաց հետ, որք կը գտնուին 'ի ձեռագրատան վանացս), խրթին մասերը կը պարզենք ըստ յունականին, յարելով 'ի ստորեւ տեղ տեղ նաեւ հին *Հռոմանց Գրքէ* մը մէջ բերուած մեկնութիւնքն (նշանակելով *Դժմ.*), գուցէ 'ի Գէորգայ Ալեւուացոյ գրեալք, եմէ լուսանցից մէջ տեղ տեղ դրուած *Գ. կամ Գեորգ* անունն՝ վերոյիշեալ վարդապետին ուզենք ընծայել:

Այս գործը վերաբերում էր Նախնիք կ'ընծայեն Գրիգորի Նիսասացույ, ընդհանրապես ի մարդոցն կազմարիւն գրոց հետ ընդօրինակելով՝ յանուն Նիսասացոյն. շփոթութիւն մի՛ որ եւ Արեւմտեաց մէջ իսկ տեղի ունեցեր է առ բազումս. այլ յունական քնազիրն կ'ուղղէ այս թերի կարծիքս:

Հ. ՍԹԱՆԱՍ ՏԻՐՈՅԵԱՆ

